Լրացուցիչ համաձայնագիր թիվ 1

10.03.2022թ.-ին կնքված թիվ PDU-11-01-22
Փոստային կապի ծառայությունների վճարովի մատուցման
պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

Ք.Երևան **«16»-ը հունիսի 2022թ.**

«ՀԱՅՓՈՍՏ» Փակ բաժնետիրական ընկերությունը, որը կազմավորվել է Հայաստանի Հանրապետության օրենքներին համաձայն և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի ազգային օպերատոր (այսուհետ՝ Ընկերություն)՝ ի դեմս Կոմերցիոն տնօրեն Ցոլակ Հովհաննեսյանի, մի կողմից, ով գործում է Ընկերության գլխավոր գործադիր տնօրեն Հայկ Կարապետյանի 2021 թվականի թիվ 418-Ա հրամանով, և ՀՀ արդարադատության նախարարությունը (այսուհետ նաև՝ «Հաճախորդ» կամ «Պատվիրատու»)՝ ի դեմս գլխավոր քարտուղար Սիրվարդ Գևորգյանի, մյուս կողմից, կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Ընկերությունը և Հաճախորդը համաձայնության են գալիս 10.03.2022թ.-ին կնքված թիվ PDU-11-01-22 Փոստային կապի ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Պայմանագրի 3.3 կետով «սահմանվում է» բառից հետո է 6.143.000 (վեց միլիոն մեկ հարյուր քառասուներեք հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն բառերը փոխարինել 13 143 000 (տասներեք միլիոն մեկ հարյուր քառասուներեք հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ» բառերով:

2. Սույն լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:

3. Սույն լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:

4. Սույն լրացուցիչ համաձայնագիրը կազմված է հայերեն, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից: Համաձայնագրի 1 (մեկ) օրինակը մնում է Ընկերության մոտ, իսկ 1 (մեկ) օրինակը տրվում է Հաճախորդին:

5.Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

Ընկերություն՝

«Հայփոստ» ՓԲԸ
ք.Երևան, 0002, Սարյան 22
ՀՎՀՀ՝ 02507464
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
ՀՀ՝ 1930003703156000
Հեռ.՝ (010) 514-548

Կոմերցիոն տնօրեն
Ցոլակ Հովհաննեսյան ----------
/ստորագրություն/

Պատվիրատու՝

ՀՀ արդարադատության նախարարություն
ք.Երևան, Վ. Սարգսյան 3/8
ՀՎՀՀ՝ 02506264
ՀՀ ֆին. նախ. գործառնական վարչություն
ՀՀ՝ 900011018547
Հեռ.՝ (010) 594-091

Գլխավոր քարտուղար
Սիրվարդ Գևորգյան ----------
/ստորագրություն/